Սա արդէն բացարձակ պատերազմ էր Հռոմի դէմ, որ հայ ժողովուրդը ընդունում էր միահամուռ կամքով: Ու հասկանալի է, որ Տակիտոս գրում է այս մասին.—

«Արտաւազդի որդին Արտաքսիաս (Արտաշէս), որին իր հօր ողբերգական մահը դարձրեց մեզ անհաշտ թշնամի, Արշակունիների օգնութեամբ կարողացաւ պաշտպանել ե՛ւ իր անձը եւ իր տիրապետութիւնը»:

Տակիտոսի այս վկայութեան մէջ կարեւոր են երկու կէտեր: Առաջին, որ Մեծն Տիգրանի թոռը Արտաշէս տակաւին ուժգնօրէն շարունակում է իր պապի սկսած կռիւները Հռոմի դէմ, եւ երկրորդ, որ Հայաստանը ինքզինքը պաշտպանելու համար Արեւմուտքի ոտընձգութիւնների դէմ ստիպուած է ձեռք մեկնել պարթեւական Արշակունիներին: Ուրիշ խօսքով՝ Փոքր Ասիական հաւասարակշռութիւնը որ հաստատել էր Մեծն Տիգրան, խախտուած է արդէն շնորհիւ հռոմայեցիների, եւ Հայաստանը Արեւելքում իր գոյութեան համար խսկ իրեն զօրավիգ է փնտռում: Ասել է, Մեծն Տիգրանի թոռան օրօք խսկ, ի յայտ են գալիս Հայաստանի նուազումի եւ բեկումի արտասուալի հետեւանքները: Արեւելքի եւ Արեւմուտքի մէջ ամրակուռ հայկական թումբը արդէն աւերուել է, Հայաստանը՝ թուլացած ու նկուն հռոմայեցիների երեսից աջ ու ձախ է նայում եւ իրենից դուրս յենարան է փնտռում:

Հռոմը այնուհետեւ կ'աշխատի, հայ եւ պարթեւ հնարաւոր զինակցութիւնը անկարելի դարձնելու համար, իրեն հաճոյակատար թագաւորներ նշանակել Հայաստանում եւ ազատուել հայոց Արտաշէսեան տոհմի անվերջ ըմբոստացումներից: Ուրիշ խօսքով՝ վերացնել բուն Հայկազեան Տան հարստութիւնը: Բայց, Հռոմի այդ կարգի փորձերը միշտ էլ կը մնան առանց որեւէ լուրջ հետեւանքի:

Հայ ժողովուրդը շատ սերտօրէն էր կապել իր անկախութիւնը իրեն մտերիմ ու հարազատ այդ արքայական տանը: Նա շարունակ ու յամառօրէն մերժում է օտար եւ իրեն խորթ իշխաններին, որոնք իր աչքում միշտ էլ մնում են որպէս մարմնացումը՝ աւելի Հռոմի ատելի դերիշխանութեան քան ազգային անկախութեան:

Ըստ երեւոյթին, Մեծն Տիգրանի եւ իր նախնեաց ստեղծած հայ ազգային ազատ, կուռ ու գիտակից ինքնուրոյնութիւնը տուել է արդէն իր պտուղները: Մեծն Տիգրանի հպարտ եւ աննկուն ոգին ապրում է սերունդների սրտում. նրա հսկայ բազուկով ստեղծուած մեծ ազգային շարժումը այլեւս չի կանգ առնում: Եւ Հռոմի համար Հայաստանը շարունակում է մնալ իբրեւ ամենէն ըմբոստ եւ ամենէն անընկճելի, յամառօրէն ոգորող մէկ երկիր:

Եւ ամէն անգամ, որ Հռոմը որեւէ թէկուզ վաղանցուկ տիրապետութեան համար յաղթանակ է տանում Հայաստանի վրայ, դա համարւում է խոշորագոյն յաջողութիւն այս կամ այն զօրավարի կեանքում եւ անհուն ցընծութիւն է պատճառում սենատի, որի հաճութեամբ եւ հրամանով անմիջապէս շրջաբերութեան մէջ են դրւում նոր դրամներ ի յիշատակ Հռոմի համար այդքան բախտաւոր մի անցքի:

Մերթ սնապարծ Մարկոս Անտոնիոսն է դրամ դարկում իր եւ իր հոմանուհու նկարով շուրջը գրուած՝ Armenia devicta, — «Հայաստան պարտուած». ուրիշ դէպքում, ինչպէս Օգոստոսի ժամանակ, Հայաստանի պարտութիւնը խորհրդանշող մի նոր դրամի վրայ տեսնում ես աւանդական «Յաղթութիւնը» (Victoire) որ զսպում է մի ամեհի ցուլ՝ Հայաստանը, այսպիսի խորագրով՝ Armenia capta, այսինքն՝ «Հայաստան գերեալ»: Եւ վերջապէս ահա այս առջեւիս սիւնի արձանագրութիւնը, ուր գերմանների ու պարթեւների հետ յիշատակուած է Հայաստանը՝ իբր ըմբոստ ու պայքարող, որ ընկճւում է կատաղի կռուից յետոյ Bello maximo Armenia devictis, — «Հայերը յաղթուած»:

Եւ այս առթիւ Մ. Աւրելիոս եւ Լուցիուս Վէրուս զօրավարը, որ կռուեց Արեւելքում, կոչւում են՝ Արմենիքուս:

Փաստն այն է սակայն, որ բոլոր այս կռիւները եւ այս յաղթութիւնները անզօր են եղել վերջնականապէս զսպել Հայաստանը: Բնորոշ է, այդ տեսակէտից, որ Օգոստոսի նշանաւոր ու քաջածանօթ տախտակի վրայ Հայաստանը, հակառակ Հռոմի պատմիչների այս տարփողած յաղթութիւններին, չէ նշանակուած կայսրութեան միացած նահանգների մէջ.